

և վառօդ կ'ընդունիմ, բայց ուրիշ բան չէ :

— Կարծէի որ հին զինուորակիցք իրարու կրնան օգնել : Մնաս բարով :

Բայց երթալէն առաջ կամացուկ մը ստակն աւազակին մախաղին մէջ զըրաւ, առանց անոր իմանալուն :

— Երթաս բարով Օրս' Անտոն, զուրցեց միւս աւազակը . յուսանք որ նորէն կը տեսնուինք իրարու հետ :

Օրսոյ հեռացաւ անոնցմէ, և քառորդի մը չափ քալելէն վերջը՝ ետեւէն մէկու մը սաստիկ վազելու ձայնը լսեց : Պրանտոլաչիոյ էր եկողը : — Ըրածդ շատ յանդգնութիւն է, շունչը կտրած ըսաւ Օրսոյի . սոսքու տասը Փրանզդ . ուրիշ մը ըրած ըլլար նէ՝ անպատիժ չէի անցըներ : Շատ բարեւ ըրէ Ալզանիի : Արիւն քրտինք մտնել տուիր ինծի : Գիշեր բարի :

Հետեւեալը գալ բերրով :

Բարիգոռ Նաքոյեռն լիկեռնը :

Յայտնի է որ անցեալ ամիս՝ ինչպէս մեր քանի մը ազգային վարժարանաց, այլ աւելի եւրոպացւոց զանազան աշխարհաց և քաղաքաց մէջ ուսանողաց քննութիւնք և պարգևաբաշխութիւնք եղած են, ըստ սովորութեան, հանճարեղ և յորդորական խօսքերով . մեր լսած և հանդիպածներուն մէջ ամենէն սրբտանց ազնիւ և ազգու երևցաւ Բարիգոռ նորընտիր արքեպիսկոպոսին խօսածն առ ուսանողս Նաքոյեռն լիկեռնին, այնպիսի բարձր գահակալի մը արժանաւոր լեզու, զգայուն լրջութեամբ, և կրնամք ըսել, բարակ ու սրբազան տիրութեան գունով մը, եթէ արդարեւ այնպէս երևայ մեր ընթերցողաց այլ, որոց, և մանաւանդ մերային ուսանողաց պիտանի և օգտելի սեպելով թարգմանեմք :

Պատանիք, պաշտօնեայն հասարակաց հրահանգութեան, ձեր հին ուսուցիչն, հաճեցաւ կանչել Բարիգոռ արքեպիսկոպոսը, ձեր հին հոգևոր հայրը,

որ գահազուլս նստի այսօրուան զմեզ հաւաքող հանդիսին : Անշուշտ ինքն մրտածեր էր որ ախորժելի պիտի ըլլայ ինծի տեսնալ կրկին անգամ այս գեղեցիկ Նաքոյեռն լիկեռնը, որուն հետ երկուքնիս ալ վերաբերութիւն ունեցեր ենք, և ուր անցեր են մեր լաւագոյն օրերուն մէկ մասն, կը համարձակիմ ըսել, աշխատանքով և անձնանուիրութեամբ : Շնորհակալ եմ իրեն որ կրցաւ այսպէս աղէկ ըմբռնել իմ զգացմունքներս, և ինծի երջանկութիւն կը սեպեմ, սիրելիք իմ, այս պատեհաւս ապահովելու ձեզի իմ գողտր և խորին խնամքս, ձեր վարժապետներուն դիտութիւնը և ձեր հոգևոր հարց խոհական նախանձը դրուատելու համար, և զամենքն ալ խրախուսելու՝ որ պահեն իրենց եռանդուն ջանքը՝ զձեզ արժանի Գաղղիոյ և արժանի կրօնից ոճով մը զարգացընելու :

Ձեր անդրանիկներուն վրայ ես ալ քիչ մը հոգ տարած եմ, և անոնք ինծի սիրելի մնացած են . սրտովս իրենց ետեւէն կ'երթամ այն ասպարէզին մէջ ուր իրենք գործունէաբար մտած են, և վստահ եմ որ Աստուած չի մերժեր իմ յիշատակս իրենց պահելն : Թողէք ինծի, որդեակք իմ, որ սրտիս գորովոյն մէջ ձեզի ալ անոնց քով տեղ մը բանամ, և ընդունեցէք իմ իղձերս՝ որովք կը փափագիմ ձեզ անդորր և յաջող բախտ մը ունենալ . և եթէ հակառակութիւնն ձեզի չխնայէ, գէթ կտրճութիւն և առաքինութիւն զձեզ չթողուն, և ամէն աւերակաց մէջ ալ բարձրագլուխ կանգնի բարոյական մեծութիւնն :

Արդարեւ ինչուան հիմա կեանքն ձեզի ծիծաղերես երևած է, և դուք պատանեկութեան անմեղ ուրախութիւններովը միայն կը ճանչնաք դեռ զանիկայ . բայց այդ կեանքը շուտով իր կերպը պիտի փոխէ և զձեզ պիտի մոցընէ հասուն մարդիկներու պահուած աշխատանայն մէջ : Ձեր ապրած տաննուհինգ տարիներուն ետեւէն կը տեսնամ երկայն ապագայ մը՝ լի ծանր և խիստ վաստակներով, դժուարին մրցմամբք և ցաւալից

յեղափոխութիւններով, որոնք երբեմն փոքրագիններուն խեղճը կը թուցնեն և կը սրտաբեկեն, բայց անսասան կտրճութիւն ունեցողներն՝ կ'ելլան անոնցմէ յաղթանակաւ և փառք: Արդ որովհետեւ այս բանս պիտի գայ ձեր գլխուն, գիտցէք ուրեմն ըստ պատշաճի պատրաստել ինքզինքնիդ, ձեր միտքն ու սիրտը մշակելով. աշխատասէր ու պարտականար մարդիկ եղիք և մնացէք. ձեր անձին գիտակցութեամբը յառաջեցէք առ կեանս և անխախտելի կեցիք այն պիտի այրական կորովութեամբ և այն պիտի բարձր բարոյականութեամբ որք կամ՝ յաղթութիւն կու տան, կամ գոնէ յաղթուածն ալ պատկառելի կ'ընեն, կը միտարեն զնա իր անպարտ դժբաղդութեանցը վրայ:

Այո՛, որդեակք իմ, մշակեցէք մաքերնիդ. ուսումնասէր մարդիկ եղիք և մնացէք: Զիկրնար մարդ նուաճել ինչ մը կամ անձ մը առանց մասամբ մը ինքզինքը գերազանց երեցընելու կամ իրօք իսկ ըլլալու. և այն գերազանցութիւնն որ աշխարհիս՝ վարչութեան մէջ ուրիշներէն վեր կ'ելլայ և զանոնք կը մթնցընէ, իմացականութեան գերազանցութիւնն է: Եւ իմացականութիւնն՝ միայն ծննդեան ատեն հետը բերուած ձիրք մը չէ, այլ է և տեսակ մը կարողութիւն որ աշխատելով կրնայ ձեռք ձգուիլ: Կրթեցէք զայն ուրեմն ուսմամբ և խորհրդածութեամբ. փասն զի կրթութեամբ է որ իմացականութիւնն կրնայ լաւ ըմբռնել մարդկանց և գործոց հանգամանքը, և ուղել անոնցմէ միայն անոնց տալ կրցածը. այս է զաղանիքն իմաստնոց և վերջին պատճառ անոնց յաջողութիւններուն:

Ես ալ գիտեմ՝ որ ամենուն մի և նոյն չափով տրուած չէ իմացականութիւնն. բայց ամենուս մէջ ալ շարժուն սահման մը ունի, զոր ուսմունքն կրնայ ընդարձակել: Եթէ բնութիւնն մարդկանց մէջ զանազանութիւններ կը դնէ, նոյնը կրնայ ընել նաև աշխատութիւնն: Կրնայ մէկն պղերգութեամբ խայտառակաբար ձախողիլ, մինչ ազնուական ե-

ռանդ մը կրնար պահել զնա ամէն չար պատահմունքներէ. այնպիսին հասուն հասակին մէջ պիտի կրէ իր անհոգութեան և թեթեամտութեան պատիժը, որոնցմով մտնեց իր լաւագոյն օրերը: Միւսն՝ անոր հակառակ՝ ուսմամբ ստացած է իր բարեբաստութիւնը և փառքը, զոր ցոյի և տարտընած պատանեկութիւն մը կըրնար ամենազուրկ և աննշան անձ մը ընել. փոխանակ գործոց բերուածքին պայմաններուն տակը ընկնալու՝ ինքն անոնց տէր եղած կարգ կը դնէ. կը փոխէ ան պայմանները իրեն ուժեղ կորովասրտութեամբը, և ինքն իրեն ազնուական տեղ մը կը բանայ զոր իր ծննդեան վիճակն չէր խոտանար. ահաւասիկ հրաշք աշխատութեան՝ արգասաւորած նախախնամութեան օրհնէնքովն, որուն համար անտարակոյս չկայ գեղեցկագոյն տեսարան մը քան սրտոտ մարդ մը որ կենաց դժընդակ պարտաւորութեանց հետ կրկնուի:

Այսպէս ուրեմն, պատանի աշակերտք, սովորեցէք ձեր օգտին համար, յուսալով ձեր և ոչ ուրիշի վրայ, ձեր մտաւոր կարողութեանն ապաւինելով՝ որ միշտ ձեզի հետ կու գայ, և ոչ ձեր ծնողաց այսօրուան մթերած ընչից վրայ, զոր աշխարհիս իրաց բնական անհաստատութիւնն կրնայ վաղը ձեռքերնէդ խլել: Սովորեցէք նաև ձեր հայրենեաց ծառայութեանը և մարդկութեան պատուոյն համար: Ոչ որ բացարձակապէս ինքն իրեն համար է, այլ ամէնքնիս իրարու երաշխապարտ ենք: Իւրաքանչիւր որ չափով մը պարտական է տալ իրեն նմաններուն իր իմացականութեան նպաստը. պէտք է որ մարդ ինքն իրեն համար հանճար ունենայ, բայց աւելի գեղեցիկ է նաև ուրիշներուն համար ունենալն և անոնց նիւթական և բարոյական բարեբաստութեանը ձեռնտու ըլլալն: Ժողովրդոց երջանկութիւնն անձնանուէր քաղաքացիներու հանճարոյն և աշխատութեան մէջն է. յառաջագիւտութեան և հասարակաց քաղաքակրթութեան գործքն անհատներու ջանքովը կը բարգաւաճի, և իւրաքանչիւրին

արժանաւորութեամբն է որ ամենուն բազմն և պայծառութիւնն կ'ըլլայ :

Սովրեցէք նաև , ներեցէք որ ըսեմ հոս , սովրեցէք որպէս զի բարոյական և կրօնականգաղափարներնհաստատուին մեր երկրին մէջ . յանուն եկեղեցւոյ , զձեզ յաշխատութիւն կը հրաւիրեմ : Չկայ ինծի այնպէս ցաւալի բան մը եկեղեցւոյ համար՝ ինչպէս տեսնալն այն մեղկութիւնը և անգործութիւնը , որք անմտածող և հետևաբար անզէն երիտասարդները կը մատնեն անհեթեթ և ծուռ իմաստակութեանց ներգործութեան : Մտաց ակարութիւնն և ոչ ուժն է զիս վախցընողն : Թէ որ զիրք մը պարսաւեմ , պատճառն ոչ թէ մէջը գիտութիւն ըլլալն է այլ չըլլալն : Անոր համար ես ալ կը գովեմ այն գործադրութիւնն որով լիկէոններուն մէջ փիլիսոփայութեան ուսումն նորէն պիտի հաստատուի , և կը համարձակիմ շնորհաւորել մեր հասարակաց հրահանգութեան պատուարժան պաշտօնեայն որ իր անունը այս իմաստուն կարգադրութեանը հետ միացուց : Այո , վերցընենք փիլիսոփայութեան վրայէն այն նզովքը՝ որոյ տակ ընկաւ , և զփրանկական հանձարը դարձրենք իրեն լաւագոյն աւանդութիւններուն : Տանք այս վառվռուն և ազնուաբարոյ երիտասարդութեան՝ առողջ՝ բայց բարձր գաղափարներու ճարակը . յատուկ՝ բայց զօրաւոր վարդապետութեամբ մը սնուցանենք զայն . և այս կերպով խափանենք որ չըլլայ մոլորութեան և ստութեան որս . պաշտպանենք զինքը անխիղճ , անզօր և անշնորհ մատենագրութեան մը ջրաւիչ ներգործութենէն :

Ուրեմն , զաւկըներս , մշակեցէք միտքերնիդ , բայց մշակեցէք նաև սրտերնիդ . պարտականտար և առաքինի մարդիկ եղէք և մնացէք : Այո , պարտք և առաքինութիւն , սիրելի և ազնիւ բերեմանութիւնք , որոց յարգութիւնն կը մեծցրնէ զհոգին , և նուաստագոյն կենաց անգամ արժանաւորութիւն և փայլ կու տայ . որք ընտանեաց հանգրտեան և ուրախութեանը պատճառ կ'ըլ-

լան , տան մը զարդ և գեղեցկութիւն . և չեն կրնար աշխարհքիս վրայէն չիք ըլլալ՝ ինչուան որ ընկերութիւնները չըլլան սոսկալի բարեւոն մը կապակոտոր ախորժակներու և անսանձ փառափրութեան , կուրօրէն ճապկըտելով աւերակաց և արեան մէջ :

Թողէք ինծի որ ըսեմ գորովանօք , վաճառ զի կը մտածեմ ձեր ապագային , ծնողաց և իմ երկրիս վրայ . հաւատարիմ եղիք ձեր պարտքերու և առաքինութեան , և զգուշացիք ամէն միտքեցուցիչ բաներէ , երևակայութեան յողդողդ հաճոյքներէն և զգացմանց տենդէն , հեշտասիրութեան ախտէն և անձնասէր շահախնդրութեան մը ձգմունքէն : Քանի քանի երիտասարդներ կը տապալեն և կ'աւերըշտակեն իրենց ապագայն անոր ծաղկին մէջ , որովհետեւ իրենք զիրենք կառավարելու գաղտնիք չունին և հաստատուն և բերրի կրթութեան ոյժ մը չունին . հակամիտութիւնն է իրենց առաջնորդն . ուզածնին չեն գիտեր , և պէտք եղածը բնաւ չեն ուզեր : Չունին ոչ ճարակութիւն , ոչ ընդդիմադրութիւն , և ոչ կռիւ . մարմինն է հրամանատու , և հոգին հպատակող : Այսպէս ամէն տեղ իրենց հաճոյն և ախորժելին փնտռելով , կը փախչին ո՞ր և իցէ ծանր և նեղիչ բանէ , և այս կերպով ցած ունակութիւններու տէր և զած կ'ապրին ողորմեաբար և կը սպասեն որ կեանքերնին մարի՝ ինքն իրեն ամօթերես և ամենէն նախատեսալ :

Իսկ դուք , ընդհառակն , սիրելի վաւկըներս , — երջանիկք , ստուգութեամբ կ'ըսեմ , ձեր ծնողաց գորովալից խնամքներով և վարժապետաց լուսամիտ փառնիցը՝ ի ձեզ տպաւորած ուղղութեանը հետեւելով , — դուք ձեր պարտքերուն բեռնը աւելի ազնուաբար պիտի կրէք : Եթէ պատահարաց ապերախտութիւնն և ձեր մտաւոր միջոցաց անհաւասարութիւնն կ'արգիլեն որ ամենքնիդ ալ նոյն բարեբաստութեան հասնիք , գոնէ ամենքնիդ ալ կրնաք անձնանուիրութեամբ և առաքինութեամբ բարձրանալ այնչափ՝ ուր երբէք զձեզ պիտի չը-

հանէին մտաց տաղանդն և անոր հետևորդ յաջողութիւնն : վասն զի սրտաւ մարդկանց արտօնութիւն է և փառք առաջի մարդկան և Աստուծոյ, իրենց բարոյական արժէքին մէջ գտնել, բաղդին խստութեանց դէմ փոխարէն վարձք մը, հաստատել իրենց չորս դին հաւասարակշռութիւն մը իրաց զօրութիւնը կըշռող մեծանձնութեամբ մը, և այսպէս ստանալ դիւցազնական գերազանցութիւն մը՝ որ մեծարանք և զարմացումն կը բերէ :

Մերժեցէք ուրեմն հեշտ վարդապետութիւնները և մեղկիչ սովորութիւնները՝ որ միայն վատ հոգիներու կը վայլեն, և մի թողութք այն սկզբունքները՝ որոնք այս լիկէոնիս մէջ, ինչպէս նաև տուներնիդ, ձեր դաստիարակութեանը հիմունք եղան, և ձեզի ճանչցնել տուին կենաց բարբը, պարտուց դժուարութիւնը և առաքինութեան յարգը : Չերանձին տէր եղիք, որպէս զի պատահաբայ տէր ըլլաք : Ունեցէք հաստատ բարբ մը, և կարգ և հաստատութիւն ձեր կենաց կառավարութեանը մէջ : Բացէք սրտերնիդ ամէն ազնուական շնչմանց, կրօնական զգացման, ծնողասիրութեան, հայրենեաց (Գաղղիոյ) սիրոյն, իրեն օրինաց մեծարանքին . այսօր՝ կըթուած և աշխատասէր համբակներ և որդիք լցուած գողտր երախտագիտութեամբ, քիչ մը վերջը օգտակար քաղաքացիք, լի պատուով և հայրենասիրութեամբ, միշտ և ամէն տեղ պարտակատար և առաքինի մարդիկ :

Կը վերջացընեմ խօսքս որդեակք : Անշուշտ այսպիսի հանդիսաւոր օրուան մը համար զրուցածս ծանր պիտի ե-

րկայ, և երկայն պիտի գայ յաղթողներու՝ որ իրենց պսակներուն կը սպասեն, բանտեալներու՝ որոնք խօսելէ դադրելուս պէս ազատ պիտի ըլլան : Բայց պիտի ինծի ներեն մտածելով որ կը սիրեմ զիրենք, և իրենց օգտակար ըլլալու զեցի. և վստահ եմ որ թարգման եղայ ձեր ծնողաց, ձեր բարեկամաց և ձեր ուսուցչաց : Չկայ այս չքեղ և համակրական ակմբիս մէջ, չկայ մէկն որ չուրախանայ սրտանց ձեր դաստիարակութեան յաջողութեան համար . վասն զի այս յաջողութիւնս չէ թէ միայն ձեր ծնողքը, այլ և բովանդակ մեր երկիրը կը պարտաւորէ, ինչու որ դուք ալ օր մը իրեն գործոցը մասնակից պիտի ըլլաք . ոմանք վաճառականութեան և ճարտարութեան խաղաղ մրցմունքներուն մէջ նետուելով, ոմանք դպրութեան և արուեստից մշակութեանը պարագած . պաշտօնեայք՝ աշխարհաբարող արդարութեամբ, քահանայք՝ գիտութեամբ և գթութեամբ առաջնորդեալք և օժանդակեալք . զինուորք աշխարհքիս մէկ ծայրէն մէկալ ծայրը թռցընելով մեր յաղթական արծիւները : Այսպէս երբ բոլոր այս ակումբս կը բացատրէ ձեզի իմ բերնովս իր ակնկալութիւնները և իր իլձերը, աղէկ կը զգայ ինքնին այն սերտ երաշխապարտութիւնն որ զինքը ձեզի հետ կը կապէ, և կը բաղձայ իր գորովալից խրատներովն ձեզի օգտակար ըլլալ : Հոս ներկայն է որ իր փորձառութիւնը կ'աւանդէ ապագային . այսօրուան Ֆրանսիան է որ զվաղուան Ֆրանսիան կ'ողջունէ ի ձեզ :